DOI: 10.54503/2953-805X-2026.8-7

ՊԱՐ, «ՆԱԽԱԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ» ԵՒ ԾԵՍ

(ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

Երբ հնագույն մարդը դեռևս ունակ չէր պատրաստելու արվեստի գործերի ստեղծման համար անհրաժեշտ պարագաներ և պիտույքներ, իր սեփական մարմինն էր հանդես գալիս որպես գործիք, նվագարան և արվեստի բաղադրիչ: Մարդու մարմնի ռիթմիկ և ոչ-առօրեական շարժումները, դրանց պարբերական կրկնությունը որոշակի ծիսական և հոգևոր միջավայրում՝ այսօր անվանում ենք պար: Գոյություն ունենալով անհիշելի ժամանակներից՝ պարն, ըստ էության, արվեստի հնագույն տեսակներից մեկն է: Այն կար, երբ տակավին չէր գոյացել մարդկային հոդաբաշխ խոսքը, չկային երաժշտական գործիքներ, չկար հագուստ: Սակայն այդ վաղնջական ժամանակներում պարն անբաժան էր մարդկային և առարկայական ձայնարկություններից, մշտապես ուղեկցվում էր դրանցով, հետևաբար կարող ենք ասել, որ նախնադարյան «երգը», «երաժշտությունն» ու «պարը» եղել են միահյուսված ու ի սկզբանե սերտաճած՝ որպես սինկրետիկ արվեստի տեսակ, որ շատ ավելի ուշ է տրոհվել ու զարգացել արվեստի առանձին տեսակների միջոցով:

Ահա այդ հնագույն «պարը», իր սինկրետիկ բնույթի շնորհիվ, բացառապես ծիսական ու հոգևոր բնույթ ուներ: Դրանից անբաժան էր բանահյուսական ենթատեքստը, եթե առհասարակ ոչ-հոդաբաշխ խոսքն ու կենդանական ձայնարկությունները կարելի է բանահյուսություն անվանել: Դրանք ավելի շատ «նախաբանահյուսություն» էին, որում առկա էր «բանը»՝ միտքը և դրա ձայնային արտաբերումը, սակայն, ըստ ամենայնի, բացակայում էր հյուսվածքը՝ կանոնիկ տեքստը: Բացի այդ, թե՛ բանահյուսությունը և թե՛ մանավանդ «նախաբանահյուսությունը» չէին կարող գոյություն ունենալ ծեսից անկախ, ուստի «պարի ծիսական և բանահյուսական ենթատեքստը» մեր այսօրվա ընկալումների ձևակերպումն է՝ արդի եզրույթներով, որը վաղնջական իր էությամբ կարող է կոչվել պարզապես մեկ բառով՝ «պար»:

Այս է նաև պատճառը, որ պարը համարվում է «արվեստների մայրը»: Եթե երաժշտությունն ու բանահյուսությունը ժամանակահեն արվեստներ են, ապա կերպարվեստն ու ճարտարապետությունը՝ տարածահեն: Մինչդեռ պարն, ի տարբերություն նշվածների, ապրում է ժամանակի և տարածության մեջ միաժամանակ[1]: Պարը կարելի է անվանել մարմնի երաժշտական պոեզիա, կենդանի կերպարվեստ ու մարդեղեն ճարտարապետություն: Այս առումով, պարն արվեստի այն եզակի տեսակներից է, երբ արվեստագետն ու իր ստեղծած գործը համընկնում են՝ մարմնավորված են մեկ առարկայում, այն է՝ մարդու մեջ: Ավելին՝ մարմնին այդքան մոտ ու սերտաճած գտնվելու պատճառով պարն ուսումնասիրելը շատ ավելի դժվար է եղել, քան արվեստի մյուս տեսակները. հետևաբար պարագիտությունն ի հայտ է եկել շատ ավելի

[1] Հմմտ Sachs C., World History of the Dance, New York: W.W. Norton & Company, inc., 1937, [469 p.], 3.

ուշ, քան երաժշտագիտությունը կամ երգային բանաստեղծության ուսումնասիրման գիտակարգերը[2]:

Եթե հաշվի առնենք ֆիզիկայում և մեխանիկայում ընդունված այն դրույթը, որ ֆիզիկական մարմնի բնականոն վիճակը ոչ թե ստատիկ՝ անշարժ դիրքն է, այլ շարժման մեջ գտնվելը, ապա պարը կարելի է մեկնաբանել որպես մարդու հոգեվիճակի բնականոն դրսևորում, որի միջոցով գծագրվում է մարդկային հոգու իրական պատկերը: Անհատի ներքին աշխարհը, այլ խոսքով՝ հոգին է, որ խթանում է մարմնի ռիթմիկ կրկնվող շարժումները, սակայն դրանց ներդաշնակ համակցումն ու միջավայրի հետ ներդաշնակ համարկումն են, որ առաջացնում են պար երևույթը: Այսինքն՝ առանց ներդաշնակության չի կարող պար լինել: Ընդ որում, «միջավայրն», այս դեպքում, թե՛ տարածական, թե՛ ժամանակային և թե՛ պատճառահետևանքային է: Բոլոր այս գործոնների շնորհիվ ծնունդ առնելով՝ պարը վաղնջական մարդու կյանքում կտրում էր ամենօրյա միապաղաղությունը և նշանավորում որևէ հին փուլի Ավարտ կամ նոր փուլի Սկիզբ:

Հին ու նոր փուլերը կարող էին տարբեր մասշտաբի լինել: Դրանց ժամանակային ընդգրկումը կարող էր սահմանափակվել մեկ օրով կամ նույնիսկ օրվա մեջ տեղի ունեցող մի քանի իրադարձություններով, սահմանները կարող էին համընկնել շաբաթական, ամսական կամ տարեկան պարբերականության հետ, փուլը կարող էր տևել մի ամբողջ մարդկային կյանք կամ նույնիսկ ավելին: Ծնունդը, մահը, ամուսնությունը, նվիրագործումը, որսը, պատերազմը, հիվանդությունը, համաճարակը, բնական աղետները, եղանակային ու երկնային երևույթները և ընդհանրապես մարդկային կյանքում պատահող այլևայլ մանր ու խոշոր դիպվածներ կարող էին հին ու նոր փուլերի եզրաբաժաններ դառնալ: Պարը ներկա էր բոլոր այդ սահմանային իրավիճակներում:

Որպես հոգու և մարմնի ներդաշնակության արտահայտում, որպես առօրեական ընթացքը բեկող ու սահմանազատող երևույթ, որպես հնագույն արվեստի տեսակ ու արվեստների մայր, պարը բնականաբար պետք է կապվեր արարման, աշխարհաստեղծման ու արարչագործության հետ: Հենց այդ պատճառով՝ վաղնջական բոլոր կրոններում պարը սակրալ բնույթ ուներ: Հնդկական Շիվան աստվածային պարի միջոցով էր արարում աշխարհը, չինական աշխարհընկալման մեջ պարից էր բխում տիեզերական ներդաշնակությունը, Իրանում և Փոքր Ասիայում տարածված սուֆիական գաղափարախոսության համաձայն՝ պարող դերվիշն, էքստազի մեջ ընկնելով, հասնում և միանում էր բարձրյալին, իսկ հայոց հեթանոսական պատկերացումներում պարն ընկալվում էր որպես ազգի հավաքական ոգու, համայնական ազատության և միասնական ծագման ծիսական արտահայտություն:

Տորք Դալալյան

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն,
Բանագիտության բաժնի վարիչ,
Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող

[2] Lange R., The Nature of Danse: an Anthropological Perspective, London: Macdonald & Evans LTD, 1975, [142 p.], vi.